ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի հուլիսի 6 -ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ԳԿ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք. Երևան «18 » օգոստոս 2023թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ գնորդ), մի կողմից, և «**Մեգաօֆիս**» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նիկոլայ Այդինյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով գնորդի և Վաճառողի միջև 2023 թվականի հուլիսի 6-ին կնքված **N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ԳԿ-1** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8,5 և 8,8 կետերի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին 2023 թվականի հուլիսի 6-ին կնքված N **ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-23/ԳԿ-1** ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամանակացույցը՝ **(Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվարից 50 (հիսուն) օրացուցային օրվա ընթացքում)** 8-րդ չափաբաժնի մասով փոփոխել համաձայն պայմանագրի 8,5 և 7 8,8 կետերի:

1.2 8-րդ չափաբաժնի մասով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի սեպտեմբերի 24-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Մեգաօֆիս» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 128	Ք Երևան Շերամի 3 /2
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	հեռ. +(374)91 30-05-33
900018001876	2050922061711001
ՀՎՀՀ՝ 01503224	ՀՎՀՀ 01264917
Ռեկտոր _____ Դ. Գալոյան	Տնօրեն _____ Ն Այդինյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.